ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18 –Ի ՆԻՍՏՈՒՄ

ԸՆԴՈՒՆՎԱԾ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2016թ. N 39-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի օգոստոսի 18-ի նիստի հետևյալ ***օ ր ա կ ա ր գ ը***.

1.1. Ջերմուկի համայնքի ղեկավարի հաղորդումը 2016 թվականի երկրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 12-ի N 6-Ա որոշման հավելված N 3-ում լրացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.3. «Ջերմուկի համայնքի Կ.Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու համար Ջերմուկի համայնքի ղեկավարի ներկայացրած թեկնածուին համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4 Ջերմուկի համայնքի սեփականությունը համարվող Մաշտոցի փողոցի N 12/1 հասցեում գտնվող անտառային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և Ջերմուկ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու մասին.

զեկ.համայնքապետարանի աշխատակազմիր գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.5. ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու նախագծման առաջադրանքին հավանություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի դպրոցներից մեկին հեռուստացույց նվիրելու համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի	բացակա		
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ Կողմ- ...8..... Դեմ-....0..... Ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 օգոստոսի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2016թ. N 40-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետին, 69-րդ հոդվածի 1-ին պարբերության, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Ընդունել ի գիտություն Ջերմուկի համայնքի ղեկավարի հաղորդումը 2016 թվականի երկրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի	բացակա		
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ Կողմ- ....8..... Դեմ-.....0..... Ձեռնպահ- 0

ԽՄԲԱԳԾԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 օգոստոսի 31
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկի համայնքի ավագանու
2016 թ. օգոստոսի 18-ի N 40-Ա. որոշման

Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի
Ջերմուկի համայնքի
2016 թվականի
երկրորդ եռամսյակի բյուջեի կատարողականը
30.06.2016թ.

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

N		Եկամուտների անվանումը	Տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան (6 ամիս)			
			պլան	պլան	Փաստ	կատար. %	կատար. %
ԽՄԲԻՄԲԸ	ենթախումբը		հազ.դրամ			6 ամիսների նկատմամբ	տարեկան պլանի նկատ.
I		**Վարչական բյուջե ընդամենը**	**238342,0**	**84015,0**	**81969,9**	**97,6**	**34,4**
1		***Ընդամենը հարկային եկամուտներ***	***47068,0***	***16813,0***	***16400,0***	**97,5**	**34,8**
	1,1	Հողի հարկ	9081,0	3953,0	3656,7	**92,5**	**40,3**
	1,2	Գույքահարկ	37987,0	12860,0	12743,3	**99,1**	**33,5**
	1,6	Հողի հարկի և գույքահարկի տույժ և տուգանք					
2		***Ընդամենը տեղական տուրքեր (թույլտվության համար)***	***10508,1***	***4472,0***	***4020,4***	**89,9**	**38,3**
	2,1	Նոր կառուցվող օբյեկտների շինարարություն	3,0	0,0	**75,0**	**0,0**	**2500,0**
	2,2	Օբյեկտները վերակառուցելու. տեսքը փոփ. աշխատանքներ	110,0	54,0	**0,0**	**0,0**	**0,0**
	2,3	Օբյեկտները քանդելու աշխատանքներ	0,0	0,0	**0,0**	**0,0**	**0,0**
	2,4	Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառք	3433,5	1425,0	1094,2	**76,8**	**31,9**
	ա	հիմնական շինությունների ներսում	3433,5	1425,0	1094,2	**76,8**	**31,9**
	բ	ոչ հիմնական շինությունների ներսում					
	2,5	Բացօթյա վաճառք կազմակերպելու	836,0	162,0	150,0	**92,6**	**17,9**
	ա	Գազ և վառելիքաքսայուղային նյութեր	325,0	162,0	150,0	**92,6**	**46,2**
	բ	գյուղմթերքներ. յուրաքանչյուր օրվա համար					
	գ	այլ ապրանքներ (այդ թվում ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանք)	511,0	0,0	0,0	**0,0**	**0,0**
	2,6	Ժամը 24.00 ից հետո աշխատելու	**500,0**	**246,0**	**200,0**	**81,3**	**40,0**
	ա	հյուրատներ					
	բ	շահումներով խաղերի կազմակերպման օբյեկտներ					
	գ	բաղնիքներ (սաունաներ)	500,0	246,0	200,0	81,3	40,0
	դ	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներ	**2590,6**	**1290,0**	**1191,2**	**92,3**	**46,0**
	2,7	Արտաքին գովազդ տեղադրելու					
	ա	ծխախոտի արտադրանք գովազդող	2590,6	1290,0	1191,2	92,3	46,0
	բ	այլ արտաքին գովազդ	**3035,0**	**1295,0**	***1310,0***	**101,2**	**43,2**
	2,8	Օրենքով սահմանված այլ տեղական տուրքեր	***500,0***	***246,0***	***163,0***	**66,3**	**32,6**
3		***ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական տուրք***	***85598,9***	***16997,0***	***15894,3***	**93,5**	**18,6**
4		***Ոչ հարկային եկամուտներ***	1851,7	1124,0	1430,0	127,2	77,2
	4,1	Համայնքի սեփ.հանդիսացող հողերի վարձակալության վարձավճար.					
	4,2	Գյուղատնտեսական հողերի վարձակալության վարձավճարներ	5146,3	1840,0	1818,6	98,8	35,3
	4,3	Տեղական ինքնակառավարման մարմինների գույքի վարձակալութ.					
	4,4	Վարչական իրավախախտումների պատժամիջոցներից	700,0	290,0	413,7	142,7	59,1
	4,5	Տեղական վճարներ	14586,9	7290,0	6592,8	90,4	45,2
	4,6	Պետական բյուջեից պատվիրակված լիազորությունների համար հատկացումներ	63314,0	6453,0	5639,2	87,4	8,9
	4,7	Այլ ոչ հարկային եկամուտներ	***94031,5***	***44851,5***	***44856,7***	**100,0**	**47,7**
5		***Պաշտոնական տրանսֆերտներ՝ հատկացումներ***	68122,3	34056,0	34061,2	100,0	50,0
	5,1	Պետական բյուջեից դոտացիա	25909,2	10795,5	10795,5	100,0	41,7
	5,2	Այլ աղբյուրներից դոտացիաներ	0,0	0,0	0,0	0,0	0,0
	5,3	ՊԲԲ տրամադրվող նպատակային սուբվենցիա	***635,5***	***635,5***	***635,5***	**100,0**	**100,0**
		Տարեսկզբի ազատ մնացորդ	**5000,0**	**1364,9**	**2336,6**	**171,2**	**46,7**
II		**Ֆոնդային բյուջե**					
	1,1	այլ աղբյուրներից կապիտալ տրանսֆերտ	4999,1	1364,0	2335,7	171,2	46,7
	1,2	Համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի օտարումից					
	1,3	Վարչական բյուջեից (պահուստային ֆոնդից) կատարվող հատկացումներ	***0,9***	***0,9***	***0,9***	**100,0**	**100,0**
		Տարեսկզբի ազատ մնացորդ					
		Ընդամենը եկամուտներ /I+II/	***243342,0***	***85379,9***	***84306,5***	***98,7***	***34,6***

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

N		Ծախսերի անվանումը	Տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան 6 ամիս)			
			պլան	պլան	Փաստ		
ԽՄԻՄԲԸ	ենթախումբը		հազ.դրամ			ժամկետից վաղաժամկետ % ժամկետում	ին կցուն ցուցիչներ % ժամկետում
I		*Վարչական բյուջե ընդամենը*	*238342,0*	*84015,0*	*81130,3*	*96,6*	*34,0*
1		Տեղական ինքնակառավարում	48514,4	20238,0	19237,9	*95,1*	*39,7*
2		Պետ. Բյուջ.ՏԻՄ պատվիրակված լիազոր.	16888,4	7450,0	7448,1	*100,0*	*44,1*
3		Կրթություն և գիտություն	28224,3	9112,0	8867,0	*97,3*	*31,4*
4		Առողջապահություն					
5		Սոցիալական ապահովություն և ապահովագրություն					
6		Մշակույթ, սպորտ և կրոն					
7		Բնակկոմունալ տնտեսություն	84745,5	26750,0	25820,5	*96,5*	*30,5*
	7,1	Ճանապարհների վերանորոգում	57953,4	19015,0	18316,8	*96,3*	*31,6*
	7,2	Սան մաքրում	1600,0	0,0	0,0	0,0	0,0
	7,3	Կանաչապատում	52119,7	18284,0	17586,0	96,2	33,7
	7,4	Արտաքին լուսավորություն					
	7,5	Հարազատներ չունեցող մարդկանց թաղում	4233,7	731,0	730,8	0,0	17,3
	7,6	Ջրային կառույցների շահագործում					
	7,7	Այլ ծախսեր					
8		Վառելիքաէներգետիկ համակարգ					
9		Գյուղատնտեսություն					
10		Անտառային, ջրային տնտեսություն և ձկնաբուծություն	*33,0*	*0,0*	*0,0*	*0,0*	*0,0*
11		Լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ					
12		Պահուստային ֆոնդ					
13		Այլ ծախսեր	0,0	0,0	0,0	*0,0*	*0,0*
II		Ֆոնդային բյուջե	1983,0	1450,0	1440,0	*99,3*	*72,6*
1		Կապիտալ շինարարություն	**5000,0**	**1364,9**	**2335,2**	*171,1*	*46,7*
2		Կապիտալ վերանորոգում	400,0	186,2	186,2	0,0	46,6
3		գեոդեզիական -քարտեզագրական ծախսեր	855,0	0,0	0,0	0,0	0,0
4		Պահուստների ձևավորում	1000,0	300,0	300,0	0,0	30,0
		Ընդամենը ծախսեր՝	2745,0	878,7	1849,0	210,4	67,4
			243342,0	*85379,9*	*83465,5*	*97,8*	*34,3*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2016թ. N 41-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի Ն 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ Ն 3-ՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների 2016 թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Ն 6-Ա որոշման հավելված Ն 3-ում կատարել լրացում. «Ջերմուկի համայնքի Կ.Ա.Ասրյանի անվան շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ում ավելացնել մարզիչի 1 (մեկ) հաստիք՝ մեկ դրույքով, 109 000 (հարյուր ինը հազար) դրամ դրույքաչափով:

2. Հաստատել «Ջերմուկի համայնքի Կ.Ա.Ասրյանի անվան շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի	կողմ		
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	կողմ		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			

Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ Կողմ- ....8.... Դեմ-....0.... Ձեռնպահ- ....0.

ԽՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 օգոստոսի 18
Ջերմուկ

Հավելված

Ջերմուկի համայնքի ավագանու
2016 թվականի օգոստոսի 18 -ի N 41-Ա որոշման

«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Կ. Ա. ԱՍՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

հ/հ	Հաստիքի անվանումը	Դրույքը	Դրույքաչափը	Ընդամենը աշխատավարձ
1	Տնօրեն	1	110000	110000
2	Մարզիչ	1,5	109000	163500
4	Հավաքարար	0.5	85904	42952
	Ընդամենը՝	*3*	*304904*	*316452*

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԳՈՇԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2016թ. N 42-Ա

«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Կ. Ա.ԱՍՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ «Ջերմուկի համայնքի Կ.Ա.Ասրյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու համար Ջերմուկի համայնքի ղեկավարի ներկայացրած՝ Գևորգ Ազատի Հովակիմյանի թեկնածությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի	բացակա		
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ Կողմ- ....8..... Դեմ-.....0..... Ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 օգոստոսի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2016թ. N 43-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ N 12/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 9-րդ և 12-րդ կետերով և հիմք ընդունելով Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի հունվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքայի համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին (ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 40-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի փոփոխություն)» N 8-Ն որոշումը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի հողերի էլեկտրոնային քարտեզում փոփոխություն կատարելու նպատակով Մաշտոցի փողոցի N 12/1 հասցեում գտնվող համայնքային սեփականության 436,8 քմ մակերեսով անտառային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նշանակության՝ հասարակական կառուցապատման՝ համապատասխանեցնելով համայնքի գլխավոր հատակագծին:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի	բացակա		
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			

Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ Կողմ- ...8... Դեմ-...0..... Ձեռնպահ- ...0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 օգոստոսի 18
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2016թ. N 44-Ա

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման ավագանին **որոշում է՝**

1. Հավանություն տալ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու նախագծման առաջադրանքին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումին ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի	բացակա		
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			

Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ Կողմ- ....8..... Դեմ-....0..... Ձեռնպահ- ..0..

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 օգոստոսի 18
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի
օգոստոսի 18-ի N 44-Ա որոշմամբ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ

1. **Համայնքի հիմնական բնութագիրը**. Ջերմուկի համայնքի վարչական տարածքը ընդգրկում է Ջերմուկ քաղաքը և Կեչուտ գյուղը

ա/ Համայնքի վարչական տարածքը՝ **13737,15 հա**

բ/ բնակչության թիվը՝ 8446 **մարդ**

գ/ հողային ֆոնդի փաստացի բաշխումը, այդ թվում՝

բնակավայրի հողեր՝ **325,4 հա.**

այդ թվում՝	
բնակելի կառուցապատում՝	111,29 հա,
հասարակական կառուցապատում՝	83,51 հա,
խառը կառուցապատում	0,47 հա,
ընդհանուր օգտագործման՝	44,56 հա,
այլ հողեր՝	85,57 հա,

գյուղատնտեսական նշանակության հողեր՝ **4639,2 հա.**

այդ թվում՝	
վարելահող՝	677,84 հա
խոտհարք՝	637,01 հա
արոտ՝	2311,79 հա
այլ հողեր՝	1012,55 հա

արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ **48,96 հա,**

այդ թվում՝	
արդյունաբերության՝	22,66 հա,
գյուղ. արտադրության՝	10,37 հա,
պահեստարաններ՝	2,53 հա,
ընդերքօգտագործման՝	13,40 հա,

էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 69,08 հա.

այդ թվում՝	
էներգետիկայի՝	11,13 հա,
կապի՝	0,38 հա,
տրանսպորտի՝	54,12 հա
կոմունալ՝	3,45 հա,

հատուկ պահպանվող տարածքներ՝ 4582,79 հա.

այդ թվում՝	
պատմական և մշակութային՝	33,25 հա,
արգելավայրեր՝	4514,54 հա
առողջարարական՝	24,75 հա,
հանգստի՝	10,25 հա

անտառային նշանակության տարածքներ՝ 3886, 55 հա

այդ թվում՝ անտառ՝	3588,46 հա
թփուտ՝	155,59 հա,
խոտհարք՝	3,63 հա
արոտ՝	8,05 հա
այլ հողեր՝	130,82 հա

ջրային տարածքներ՝ 185,17 հա,

այդ թվում՝	
գետեր՝	52,59 հա,
լճեր՝	3,35 հա,
ջրանցքներ՝	8,49 հա,
ջրամբարներ՝	120,74 հա,

Հողային ֆոնդի ցուցանիշները բերված են 2016 թվականին հաստատված հողային հաշվեկշռով և ենթակա են ճշգրտման օրենսդրությամբ սահմանված կարգով:

դ/ Ռեսուրսների հիմնական տեսակները, արտադրության գերիշխող ճյուղերը՝ բնական, բուժական, առողջարարական, ջրային, հանքահումքային, ռեկրեացիոն, հանքային ջրի աղբյուրներ, խմելու ջրի բնական աղբյուրներ, լանդշաֆտային գոտի (Արփա կիրճ), Սբ. Գայանե եկեղեցի, պատկերասրահ, ջրաբանական պետական արգելավայր:

ե/ առկա են հանրային օգտագործման կանաչ գոտիներ, ռեկրեացիոն տարածքներ

զ/ արտադրության գերիշխող ճյուղը հանքային ջրերի արտադրությունն է

է/ Տրանսպորտ, ինժեներական ենթակառուցվածքներ

- Համայնքը գտնվում է Երևան քաղաքից 173 կմ, մարզկենտրոն Եղեգնաձորից՝ 50 կմ հեռավորության վրա: Երևանի հետ կապված է Ջերմուկ-Երասխ-Երևան ավտոմայրուղով: Քաղաքը Երևան-Գորիս-Ստեփանակերտ մայրուղուց գտնվում է 24 կմ հեռավորության վրա:
- Ապահովված է ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էներգամատակարարման և ավտոճանապարհային ցանցերով:

- Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը և մակերեսը, դրանց վիճակը---25000 քմ, 155820 քմ, լավ վիճակ:
- Համայնքային ենթակայության կամուրջների և ինժեներական այլ կառույցների քանակը և վիճակը ---7, բավարար:
- Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի վիճակը, համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների ու կազմակերպությունների նյութատեխնիկական ապահովվածության վիճակը--- ներհամայնքային սպասարկումը գտնվում է բավարար վիճակում:
- Համայնքի տարածքում մարդատար և երթուղային տաքսիների ծառայության առկայությունը և մակարդակը---- երթուղային տաքսիների ծառայությունը իրականացվում է տեխնիկապես լավ վիճակում գտնվող նոր «Գազել» միկրոավտոբուսներով: Գործում է նաև մարդատար տաքսիների ծառայություն:

2. *Համայնքի զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները.*

Համայնքի հեռանկարային զարգացումը նախատեսվում և պայմանավորված է քաղաքաշինության, զբոսաշրջության, սոցիալական, մշակութային, ինժեներատրանսպորտային և այլ համակարգերի /այդ թվում վերականգնվող էներգետիկայի / կատարելագործմանն ուղղված ծրագրերի իրականացմամբ:

3. *Համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները.*

- ✓ ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքի վարչական սահմաններ նկարագիրը հաստատելու և Ջերմուկի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 709-Ն որոշումը,
- ✓ ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N 40-Ն որոշումը,
- ✓ ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Գյումրու, Վանաձորի, Դիլիջանի, Ջերմուկի, Վաղարշապատի, Աշտարակի, Գորիսի, Վայքի քաղաքային և Տաթևի ու Հալիձորի գյուղական համայնքներում /բնակավայրերում/ քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներն առանձնացնելու մասին» թիվ 728-Ն որոշում,
- ✓ ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ին հաստատվել է <<Ջերմուկ քաղաքը զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին>> N 1064-Ն որոշում,
- ✓ ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի նիստի «Ջերմուկ քաղաքի զարգացման ռազմավարության» N 29 արձանագրային որոշում
- ✓ Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թ հունվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին (ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի

19-ի N 40-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի փոփոխություն)» N 8-Ն որոշում,

4. *Տեղեկատվություն համայնքում առկա ելակետային տվյալների վերաբերյալ.*

Ջերմուկի համայնքն ունի հաստատված գլխավոր հատակագիծ, հողերի կադաստրային քարտեզ և անշարժ գույքի կադաստրի հետ կապված այլ տվյալներ, տվյալներ բնակելի, հասարակական և արտադրական կառուցապատման վերաբերյալ, տվյալներ կոմունալ տնտեսության և ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքի առկա իրավիճակի մասին, դեմոգրաֆիկ տվյալներ, համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմնների որոշումների պատճեններ: Գլխավոր հատակագծի լրամշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալները՝ տեղագրական հանույթները, կադաստրային քարտեզներն ու կադաստրային այլ տվյալները,ինչպես նաև ՀՀ մշակույթի նախարարության կողմից վերջին տարիներին կազմված և ճշտված պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը և անհրաժեշտ այլ ելակետային տվյալները ձեռք է բերում նախագծման աշխատանքների Կապալառու կազմակերպությունը:

Գլխավոր հատակագծի լրամշակման (փոփոխությունների) համար անհրաժեշտ ելակետային նյութերից ՀՀ ԱԻ նախարարությունը համայնքին տրամադրում է ՀՀ ՍՊԱԾ-ի կողմից կազմված ՀՀ սեյսմիկ շրջանացման քարտեզը:

5. ***Նախագծի նպատակը.***

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի գլխավոր հատակագծում կատարվող փոփոխությունները պայմանավորված են քաղաքաշինական գործունեություն ծավալելու ընթացքում առաջացող լուրջ խնդիրներով, որոնք կապված են հատակագծում տեղ գտած անճշտությունների հետ: Դրանք են՝

-բնակելի կառուցապատման համար նախատեսված գոտիները հատակագծում նշվել են կամ որպես անտառային, կամ հասարակական, կամ գյուղատնտեսական նշանակության հողեր.

- իրականության մեջ առկա անտառային գոտիները գլխավոր հատակագծում նշված են որպես հասարակական կառուցապատման նշանակության.

- հատակագծում նշված են ընդհանուր օգտագործման հողեր կամ ճանապարհներ, որոնք անիրատեսական են, իրականում չկան, որը խոչընդոտ է հանդիսանում նախկին հատակագծին համապատասխան արված հողահատկացումների արդյունքում սկսված կառուցապատման աշխատանքներին.

-գոյություն ունեցող շենք-շինությունների զբաղեցրած հողատարածքների սահմանների հստակեցման կարիք կա:

Մասնավորապես՝

1. Քաղաքի Շահումյան փողոցի 19-րդ շենքի հարակից տարածքը,ինչպես նաև՝ «Արմենիա» առողջարանի սեփականաշնորհված տարածքները գլխավոր հատակագծում ներկայացված են որպես անտառային հողեր, մինչդեռ դրանք բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասեր են՝ հիմնականում արդեն մասնավորեցված նախկին հատակագծի հիման վրա:

2. Կեչուտ գյուղի հիվանդանոցից (այժմ՝ չգործող) մինչև Ս. Գայանե եկեղեցու խաչմերուկը, Երևանյան խճուղուն հարող տարածքները հողակտորներ գլխավոր հատակագծում ներկայացված են որպես հասարակական նշանակության. դրանք պետք է լինեն բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատարածքներ. այս

հատվածում Կեչուտ գյուղի բնակիչներին սեփականաշնորհման գործընթացների ժամանակ հատկացվել են տնամերձ հողամասեր, որոնց նկատմամբ գյուղացին չի կարողանում գրանցել իր սեփականության իրավունքը:

3.Կեչուտի ջրամբարի ափամերձ տարածքը հատակագծում ներկայացված է գյուղատնտեսական նշանակության. պետք է փոխվի բնակավայրերի նպատակային՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

4.Թիվ 1 առողջարանին կից՝ Ի. Օրու փողոցին հարակից տարածքները, ինչպես նաև՝ «Ջերմուկ աշխարհ» առողջարանի դիմացի կիրճը ներկայացված է որպես հասարակական նշանակության գոտի. պետք է լինեն անտառային գոտիներ (դրանք այդպես էլ կան): Նույն տեղում նախատեսված անտառային գոտուց անհրաժեշտ է առանձնացնել պոմպակայանի տարածքը՝ որպես հասարակական նշանակության գոտի:

5.«Գլաձոր» առողջարանին մոտ գտնվող սրբավայրին կից հողերը հասարակականից պետք է դառնան ընդհանուր օգտագործման հողեր:

6.«Եղնիկի» արձանին հարակից տարածքը՝ մոտ 2 հա մակերեսով, անտառային գոտուց պետք է ընդգրկվի ընդհանուր օգտագործման և հասարակական նշանակության գոտու մեջ:

7.«Ջերմուկ աշխարհ» առողջարանից դեպի «Ջերմուկ» չգործող հյուրանոց ձգվող ճանապարհը գլխավոր հատակագծում անիրական է, չկա և իրատեսական չէ անգամ հետագայում ունենալու համար: Նշված տարածքում, մինչ հատակագծի հաստատումը, կատարվել է հողահատկացում՝ բնակելի կառուցապատման համար:

8. Ի. Օրու փողոցի վրա գտնվող հանքային ջրի գլխամասային հանգույցները գտնվում են անտառային տարածքում, որը անհարժեշտ համապատասխանեցնել ըստ նշանակության:

---

6. ***Նախագծի գրաֆիկական և տեքստային մասերին ներկայացվող հիմնական պահանջները***

ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի լրամշակման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» N 1920-Ն և ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի «Բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 408 որոշումներով սահմանված դրույթներին համապատասխան, հիմք ընդունելով նաև «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի «Ջերմուկ քաղաքը զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին>> N 1064-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի նիստի N 29 արձանագրային որոշումը, ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի <<ՀՀ Վայոց Ձորի մարզի տարածքային հատակագծման նախագիծը /Ջերմուկի նոր օդանավակայանի տարածքի ընտրության ներառմամբ/ հաստատելու մասին» N 103-Ն որոշումը: Նախագծման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 728-Ն որոշմամբ Ջերմուկ քաղաքային համայնքի վարչական սահմանում առանձնացվել է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ /տարածքը համաձայն նույն որոշման հավելված 4-ի/, որի համար քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշմամբ: :

Փաստաթղթի մշակման ելակետային նյութերի հավաքումը (բացառությամբ՝ համայնքի կամ պետական կառավարման մարմինների կողմից տրամադրված նյութերի), ինչպես նաև նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձագիտական եզրակացությունների ստացումն իրականացնելու է նախագծային փաստաթղթեր մշակող կապալառուն: Կապալառուն մասնակցելու է նաև հասարակության իրազեկման և շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցման օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման շրջանակներում կապալառուն՝ պատվիրատուի առաջարկությամբ, ներկայացնում է համապատասխան նախագծային նյութեր (անհրաժեշտության դեպքում նաև մագնիսական կրիչով)՝ համայնքի ավագանու, հասարակայնության ներկայացուցիչների և շահագրգիռ մարմինների հետ միջանկյալ քննարկումներ կազմակերպելու, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված՝ ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

Նախագիծը պատվիրատուին է ներկայացվում սույն առաջադրանքով և պայմանագրով նախատեսված հետևյալ ժամանակացույցով՝

I փուլ - ելակետային նյութերի (այդ թվում՝ սահմանված կարգով հաստատված ինժեներաերկրաբանական, միկրոսեյսմաշրջանացման քարտեզների) թարմացում՝ հավաքագրում, վերլուծություն, համակարգում: ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված հավելված 4-ի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված՝ տարածքի փաստացի օգտագործման և տարածքի համալիր գնահատման (ռիսկերի և սահմանափակումների) հատակագծերի լրամշակում: Նույն կետի 6-րդ ենթակետով սահմանված՝ համայնքի տարածքային զարգացման հատակագծի (հիմնական գծագրի) և 10-րդ ենթակետով սահմանված՝ քաղաքաշինական գոտևորման նախագծի սկզբունքային լուծումների /էսքիզի/ մշակում (ավարտ՝ 30.09.2016):

II փուլ - նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտում, հասարակության իրազեկման սահմանված ընթացակարգերին մասնակցություն: II փուլի աշխատանքները պատվիրատուին են հանձնվում շրջակա միջավայրի վրա ազդեցության և քաղաքաշինական համալիր փորձագիտական դրական եզրակացություններով (ավարտ՝ 30.10.2016):

I և II փուլերի նյութերը լիազոր մարմնի քննարկմանն են ներկայացվում մեկ օրինակ՝ թղթային, 12 օրինակ՝ *pdf և 1 օրինակ՝ AutoCAD ծրագրով, լազերային կրիչների վրա:

III փուլ – քննարկումների և համաձայնեցումների արդյունքներով նախագծային փաստաթղթերի վերջնամշակում: Նախագծային փաստաթղթերի պայմանագրով սահմանված քանակությամբ օրինակների տպագրություն (ավարտ՝ 15.11.2012):

Բոլոր փուլերի գծագրական նյութերն ուղեկցվում են բացատրագրերով՝ վերը նշված փուլերին համապատասխան տեքստային և աղյուսակային մասերի ներառմամբ:

Վերջնական փուլի աշխատանքները պատվիրատուին են հանձնվում հինգ բնօրինակից՝ թղթային և հինգ բնօրինակից՝ լազերային կրիչի վրա: Նախագծային աշխատանքները մշակվում են AutoCAD ծրագրով:Կապալառուն մասնակցում է փաստաթղթի համաձայնեցման, եզրակացությունների տրամադրման, ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացվող նյութերի կազմման օրենսդրությամբ սահմանված բոլոր գործընթացներին:

Սույն բնութագրով նախատեսված աշխատանքները քննարկվելու են ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովում:

Պատվիրատուի կողմից մրցույթում հաղթող ճանաչված նախագծային կապալառու կազմակերպությանը կտրամադրվեն Ջերմուկ համայնքի գլխավոր հատակագծի լրամշակման փաթեթը՝ անհարժեշտ փոփոխությունները կատարելու տեսական և գործնական նյութերով:

Առաջադրանքը կազմեց՝

Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ

Ա.Գառնիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2016թ. N 45-Ա

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՑ ՄԵԿԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑ ՆՎԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի դպրոցներից մեկին Ջերմուկի երկրապահ կամավորականների կողմից ամենամյա ուխտագնացության ժամանակ համայնքի անունից հեռուստացույց նվիրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշման առաջին կետում նշված նպատակի համար ֆինանսական հատկացում կատարել համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցներից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի	բացակա		
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			

Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ Կողմ- .....8..... Դեմ-....0..... Ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 օգոստոսի 18
Ջերմուկ